

Է Ր Ե Բ Ո Ւ Ն Ի > Ե Ր Ե Վ Ա Ն

Մ. թ. ա. IX դարում, Հայկական լեռնաշխարհում, ցեղային խոշոր միավորումներից պատմության բեմ է ելնում, արդեն որպես կանոնավոր ռազմաստրկատիրական պետականություն, Ուրարտուն, կենտրոն ունենալով Վանը (ուրարտացոց Տուշպան) իր շրջակայքով:

Ուրարտական պետությունը իր ծաղկման ու բարգավաճման շրջանը ապրեց մ. թ. ա. VIII դարում, հատկապես Արգիշթի Ա-ի և Սարգուրի Բ-ի օրով:

Այս ժամանակաշրջանում էր, որ Ուրարտուն առավել ընդարձակեց իր պետական սահմանները և Արգիշթի Ա-ի (մ. թ. ա. 786—764 թթ.) նախաձեռնությամբ անցավ Երաս գետի ձախ ափը, ձգտելով գրավել նաև Սևանի ավազանը:

Ըր հաղթարշավի ճանապարհին Արգիշթի Ա-ը (հետագայում նաև Սարգուրի Բ-ը) ձեռնարկեց շինարարական լայնածավալ աշխատանքներ, որոնց թվում էրեբունի բերդ-քաղաքի կառուցումը, իր տիրակալության 5-րդ տարում (մ. թ. ա. 782—781 թթ.):

Էրեբունի քաղաքանունը ուրարտական սկզբնաղբյուրների մեջ առաջին անգամ հանդիպում է Վանի սրբ. Սահսկ եկեղեցում հայտնաբերված կոթողի բնագրում¹, սրա 15-րդ տողում URU²Er-bu-ni-ni ձևով. քաղաքը կառուցել է մինուայի որդի Արգիշթին: Այս կարևոր հաղորդումը բառացիորեն կրկնվել է Խորխորյան տարեգրության II սյունակի 33-րդ տողում, ինչպես պարզվում է այս երկու, մասամբ կրկնօրինակ արձանագրությունների համեմատությունից²:

Էրեբունիի անվան այդ միակ հիշատակությունը, սակայն, ժամանակին առանձնապես չգրավեց մասնագետների ուշադրությունը, քանի որ նրա տեղը մնում էր անհայտ:

1950 թ. Արին-բերդում (Երևանից հարավ-արևելք ընկած բլրի վրա) կատարված հետախուզական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեցին ուրարտական սեպագիր երկու արձանագրություն, որոնցից մեկը հաղորդում էր նույն Էրեբունի բերդ-քաղաքի կառուցման փաստը³:

¹ Г. А. Мелникшвили, Урартские клинообразные надписи, 1960 (այսուհետև՝ УКН), № 128, А2 13—22'

² УКН, № 127, II 28—37' Ավելի քան կես դար առաջ Վ. Բելքը նշել էր, որ այդ երկու արձանագրությունները որոշ իմաստով կրկնօրինակներն են (W. Belck — 1) Bericht über die Ergebnisse der von Dr. W. Belck und Dr. C. F. Lehmann., 1900, № 99, *100. նաև՝ 2) VBAG, 1901, էջ 298—299):

Այդ երկու վիճադրերի համեմատությունը հնարավորություն է տվել Գ. Ա. Միլիբիլիուսին այս և բազմաթիվ այլ տողեր վերականգնելու:

Անկախ Գ. Ա. Միլիբիլիուսից, մենք նույնպես կատարել էինք այդ աշխատանքը, միայն թե ժամառ ակին տպագրելու հնարավորություն չունեցանք:

³ Այդ արձանագրությունը հայտնաբերել է Արին-բերդի հետախուզական և մասնակի վերականգնման աշխատանքներին մասնակցող, այն ժամանակ (1950 թ.) Երևանի գյուղատնտեսական

Ահա այս արձանագրությունը դարձավ Երևան քաղաքի ծնունդը նշող մի անգնահատելի վավերագիր:

Արձանագրության բնագիրը հետևյալն է.

- 1 DHal-di-ni-ni al-su-i-ši-ni
 'Ar-gi-iš-ti-še 'Mi-nu-a-hi-ni-še
 i-ni É. GAL ba-du-si ši-di-iš-tu-ni
 te-ru-bi URU Er-<e>' bu-ú-ni-ni ti-ni
- 5 KUR Bi-a-i-na-u-e uš-ma-a-še
 KUR lu-lu-i-na-ú na-pa-hi-a-i-di
 'Ar-gi-iš-ti-še a-ll qí-u-ra-ni
 qu-ul-di-ni ma-nu za-du-ú-li
 ar-ni-<ú>⁵ ši-ni-li DAN.NU iš-ti-ni
- 10 DHal-di-ni-ni al-su-i-ši-ni
 'Ar-gi-iš-ti-ni 'Mi-nu-a-hi
 LUGÁL DAN.NU LUGÁL KUR Bi-a-i-na-u-e
 a-lu-si URU Tu-uš-pa-a-e URU

Մեջ բերենք վիմագրի բովանդակությունը թարգմանաբար.

«Խալդյան մեծությամբ Արգիշթին Մինուայան այս բերդը հռչակապ կառուցեց:

Դրեցի էրեբունի անունը, Եիայնա երկրների փառքի (*), թշնամիներին սարսափեցնելու (°) համար:

Արգիշթին ասում է՝ հողը ամայի (*) էր. կատարեցի հզոր ձեռնարկումներ այնտեղ:

Խալդյան մեծությամբ Արգիշթին Մինուայան թագավոր (է) հզոր, թագավորը՝ բիայնացոց, տերը՝ Տուշպա քաղաքի»:

Արձանագրության ընձեռած կարևորագույն նորությունը պարփակված է նրա 2—4 տողերում, որտեղից պարզվում է, որ Արգիշթի Ա-ը կառուցել է մի հռչակապ բերդ և կոչել է այն էրեբունի անունով:

Վերոհիշյալ վիմագիրը թեև հայտնաբերվեց ոչ իր նախնական տեղում, բայց քարի շինարարական բնույթը, պահպանվածությունը, հայտնաբերման վայրը՝ բերդի⁶ գլխավոր մուտքի շրջակայքում⁷, արդեն բոլորովին անկասկած էին դարձնում այն կարևոր հանգամանքը, որ արձանագրությունը պատկանել է հենց նույն հուշարձանին և, ուրեմն, այդ կառույցն էլ կոչվել է էր(ե)բունի:

Ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանող Ռաֆիկ Ռաֆայելյանը, որ աշխատելիս հանկարծ նկատում է երկու խոշոր քար. շոշափում է քարերի զետին դարձած մակերեսը և հանդիպում մանր խորդուբորդությունների, որոնք հենց քարի վրա փորագրված սեպագրերն էին, ինչպես պարզվել է քարերը շրջելուց հետո:

⁴ Բնագրում բացակայում է. վերականգնում ենք YKH, № 147b, արձանագրության հիման վրա:

⁵ Վերականգնում ենք այլ արձանագրությունների հիման վրա:

⁶ Դեռևս 1894 թվականին, ուսս հնագետ-ճարտարապետ Ա. Ա. Իվանովսկին հետախուզել է բլուրը, տվել կառույցի մոտավոր հատակագիծը և ձեռք բերել արինբերդյան առաջին սեպագիր արձանագրությունը (А. А. Ивановский, По Закавказью. Материалы по археологии Кавказа (այսուհետև՝ МАК), VI, 1911, էջ 59—61: Արձանագրության առաջին վերձանումը տվել է ուսս ակնաւոր արևելագետ Մ. Վ. Նիկոլսկին (МАК, V, 1896), КНЗ, № 22:

⁷ К. Л. Оганесян, Арин-берд (Ганли-тапа) урартская крепость гор. Ирпун. ՀՍՍՀ ԳՊ «Տեղեկագիր» (հաս. դիտութ.), № 8, 1951, էջ 80 (այսուհետև՝ «Տեղեկագիր»):

Այս արձանագրության վերծանման մեջ խիստ կարևոր էր քաղաքանվան ճիշտ տառադարձումը: Մենք նկատի ունենալով լեզվական որոշ օրինաչափություն (ր, լ հնչյուններին անմիջապես հաջորդող քաղաձայնը ուրարտերենում հնչել է ձայնեղ), հենց սկզբից տառադարձել ենք Ir/er-bu-ni ձևով⁸. Նույն ձևով է վերծանել նաև ականառու հայագետ-ուրարտագետ Գ. Ա. Ղափանցյանը, կապելով այն Մ. Խորենացու հիշատակած ԱՐԲՈՒՆ⁹ անվան հետ¹⁰: Այս դուգահեռը հիմնավորելու համար, առայժմ բացի արտաքին նմանությունից, ուրիշ փաստեր չունենք: Քննության առարկա քաղաքանունը b-ով է տառադարձել նաև Ի. Մ. Դյակոնովը, նկատի ունենալով ուրարտերեն ebanu «երկիր» բառը, որպես քաղաքանվան բաղկացուցիչ մի մասը¹¹:

Հետաքրքիր դուգադիպություններ, գրեթե միաժամանակ, կարմիր-բլուրի պեղումները հայտնաբերեցին Արգիշթի Ա-ին հիշատակող բրոնզե վահաններ, որոնց վրայի գրություններում նորից հանդիպում ենք Erbuni քաղաքանվանը, այս անգամ -(e)di ուղևորական հոլովանիչով կամ՝ թերևս ավելի ճիշտ -edi «համար» հետդիրով¹²: Չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ այս վահաններից մեկի վրա մեղ հետաքրքրող քաղաքանունը կիրառված է մի փոքր տարբեր գրությամբ՝ URUEr-bu-ni-ի փոխարեն URUEr-e-bu-ni¹³, ճիշտ ալն պես, ինչպես ունենք IEr-ku-a և IEr-e-ku-a կամ՝ IE-ri-ku-a, նույն անվան գրության տարբերակները¹⁴: Միանգամայն պարզ է, որ սա մի օրինաչափ երևույթ է, ըստ որում, բուռամիչի r-ն արտասանվել է կիսաձայնի դուգորդությամբ, իսկ միևնույն բառի գրության այս տարբերակները դրսևորում են բառի գրության մի դեպքում լրիվ, մյուս դեպքում՝ սղված պատկերը:

Հնարավոր է նաև, որ այս e-ն առաջացած լինի նմանահնչունության օրենքով՝ բառասկզբի e ձայնավորի աղդեցությամբ և, ուրեմն, ուրարտերենում այդ քաղաքանունը, ամենայն հավանականությամբ, հնչել է Er(e)buni և ոչ թե Ir(e)buni, ինչպես սովորաբար ընդունված է տառադարձել տվյալ բառասկզբի սեպախումբը (𐎶𐎵𐎺):

Բոլոր դեպքերում URUErebunledi գրության մեջ r և b քաղաձայնների միջև e-ի առկայությունը իրավունք էր տալիս ժխտելու լեզվագիտական այն միակ առարկությունը, թե՛ ուրարտական b-ն հայերենում w է տալիս, այն դեպքում, երբ այն (b-ն) գտնվում է կամ բառասկզբում (Biaini>Վան), կամ՝ Լրկու ձայնավորների միջև (abili> ավելի):

Այսպիսով, հիշյալ բառի ճիշտ արտասանությունը եղել է ոչ թե Irbuni կամ բոլորովին սխալ՝ Irpuni, այլ՝ Erbuni¹⁵:

8 Մ. Ա. Բսրայելյան, 1. Ուրարտական նոր արձանագրությունների հայտնաբերում, «Սովետական Հայաստան», 1950, № 234: 2. Ուրարտական երկու նոր արձանագրություն. «Տեղեկագիր», № 8, 1951, էջ 89—94:

9 Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Ա, գլ. ԺԺ:

10 Г. А. Капанця, Новая клинопись, «Коммунист», 1950, № 235.

11 И. М. Дьяконов, Г. А. Меликишвили, Наини-Урарту, Тбилиси, изд. АН Груз. ССР, «Вестник древней истории», 1956, № 2, էջ 62 (այսուհետև ВДИ).

12 Վահանները գտնվել են՝ 1950 թ. (УКН, 145₂), 1951 թ. (УКН, № 146_{1,2}), 1952 թ. (УКН, № 147a_{1,2}, № 147b₁):

13 УКН, № 147b₁:

14 УКН, № № 31₂ և 34₂, 35₂, նաև՝ 30_{2,8}:

15 Քաղաքանվան հանար Irpuni սխալ տառադարձումը որոշ մասնագետներ համառորեն

Փանի որ բերդը կառուցել է Արգիշթի Ա-ը և ինքն էլ անվանակոչել է այն, պետք է ենթադրել, թե այդ անունը ուրարտերեն բառ է և, ուրեմն, որևէ իմաստ ունեցել է ուրարտերենում:

Արին-բերդի և Կարմիր բլուրի պեղումների ընձեռած նոր նյութերը որոշ չափով օգնում են մեզ պարզաբանելու այն կարևոր հարցը, թե ինչ իմաստ կարող էր լարտահայտել *er/e/buni* ուրարտերեն բառը՝

Արին-բերդի արձանագրական նյութերի բազմակողմանի ուսումնասիրությունից ելնելով, մենք նախապես հույս հայտնեցինք, որ 1950 թ. գտնված և էրեբունի բերդ-քաղաքի հիմնադրումը հաղորդող արձանագրությունը, անկասկած, ունեցել է իր կրկնօրինակը¹⁶, որը շուտով, 1958 թ. պեղումների ժամանակ հայտնաբերվեց իր նախնական տեղում (*in situ*), այսինքն՝ բերդի գլխավոր մուտքի ձախ պատի տուֆաքար ներքնաշարում: Սրանով մի ավելորդ անգամ ընդգծվեց, որ 1950 թ. արձանագրության գնահատականը՝ նրա արժեքը, տեղադրումը և զիտական խոշոր նշանակությունը, լիովին ճիշտ է եղել:

Նոր արձանագրությունը, սակայն, *erbuni* բառիմաստը մեկնաբանելու համար ոչինչ չավելացրեց մեր նախկին տվյալների վրա: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում Կարմիր բլուրից պեղված մի քանի կավե սեպագիր սալիկները: Սալիկների բովանդակության մեջ թեև շատ քան դեռևս մութ է, անմատչելի, բայց և այնպես, նրանք իրենց նոր բառերով ու կապակցություններով անգնահատելի նյութ են մասնակարարում ուրարտագիտությանը:

Մեզ հետաքրքրող բառը հանդիպում է 1955 թ. գտնված մի սալիկի 7-րդ տողում, առանց ֆառաֆ բացահայտչի, այսինքն որպես հասարակ բառ և, ըստ երևույթին որպես բայ, անցյալ կատարյալի եզակի III դեմքով՝ *erbuni*, հետևյալ նախադասության մեջ. 'Tataše LÚERÈ GAŠAN x(?)-i MÍN. TUR erbuni, այսինքն՝ ոմն «Թաթան, ստրուկը տիրուհու, աղջիկ *erbuni*»¹⁷,

Բառը նույն ձևով, այս անգամ ինչ-որ ձևով հանդիպում է 1957 թ. գտնված, մի այլ սալիկի 17-րդ տողում՝ „I ANŠU KUR.RA erbuni, այսինքն՝ «1 ձի *erbuni*»¹⁸...

Կասկածից վեր է, որ այս *erbuni*-ն բայ է և մոտավորապես նույն իմաստն է արտահայտում, ինչ վաղուց հայտնի *i/erbitu* բայը, որը հանդիպում է *mei ali LÚA.SI^{MEŠ}-še erbitu...* (իսկ) թե ինչ գինվորները վերցրին// հափշտակեցին...» կապակցության մեջ¹⁹ և, հավանաբար, նշանակում է քալանել, հափշտակել, գողանալ, առևանգել և այլն: Այս այն դեպքում, երբ ուղիղ խնդիրը շարժական առարկա է՝ իր, մարդ, կենդանի, իսկ անշարժ օբյեկտի

շարունակում են, թեև նույն նշաններով գրվող և, մեր կարծիքով, նույնիմաստ բայը իրավամբ տառադարձում են *irbuni* (հմմտ. ՄԿՈ, էջ 431 և էջ 398) ձևով:

Տարօրինակ է, որ այդ քաղաքանունը երբեմն *p*-ով են տառադարձում նաև որոշ հայագետներ, որոնք մի կողմից ընդունում են *Erebuni* > «Երեվան» ստուգաբանությունը, մյուս կողմից՝ հետևում են *p* տառադարձմանը (Ս. Տ. Երեմյան, Անցյալում..., «Սովետական արվեստ» № 1, 1962, էջ 1—2), մոռանալով, որ *p*-ն հայերենում *w* չի կարող տալ:

16 Մ. Ա. Իսրայելյան, Ուրարտագիտական դիտողություններ, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1958, էջ 207—208, ծնթ. 1: (Այսուհետև՝ ՊԲՀ):

17 И. М. Дьяконов, Урартские письма и документы, № 4, տող 6—7, ծնթ. (այսուհետև՝ УПД):

18 УПД, № 7. *erbuni*-ն Ի. Մ. Դյակոնովը թարգմանում է ուսերեն «ПОХИТИЛ» բառով:

19 ՄԿՈ, 155с, տող 45—46:

դեպքում (բերդ, քաղաք, երկիր) բացառված չէ, որ erbuni-ն նշանակեր «դրավեց», «նվաճեց», «տիրեց» և այլն:

Ուրեմն, վերոհիշյալ երկու կասկածությունը պետք է թարգմանել «Թաթան... աղջիկ առևանգեց», «(նա) ձի հափշտակեց // գողացավ»:

Մեր համոզմունքով, նույն այս er/e/bu բայիմաստն է պարունակում նաև բերդ-քաղաքի անունը և, երևի, ուրարտերենում այն պետք է նշանակեր «գրավեց», «նվաճեց», «հաղթեց». գոյականի իմաստով՝ «գրավում», «նվաճում», «հաղթանակ»: Այս զուգահեռը իմաստի առումով մեզ ավելի հավանական է թվում, քան այլ բացատրություններ: Այսպես, օրինակ, Ի. Մ. Պյակոնովը 1956 թ. հրատարակած իր մի գրախոսականում այլ մեկնաբանություն է տալիս երեվան քաղաքանվանը, ուրարտերեն բառը տրոհելով երկու մասի՝ ere-ebani, այսինքն՝ ere ցեղի անվան երկիր²⁰, բայց մեր կարծիքով, քանի որ բառը կազմվել է ուրարտերենի օրինաչափությամբ, հազիվ թե այն իր մեջ ամփոփեր -ebani բաղկացուցիչ մասը: Այդ դեպքում անհասկանալի է մնում, թե ինչու ebani բառի գործածության ժամանակ բառաբարդման մեջ այն դարձել է -ebuni, կամ, որ ավելի անհավանական է, -buni. երբ ուրարտերենում առկա է er/e/bu-բայարմատը իր՝ «առևանգել», «հափշտակել», նաև «նվաճել», «հաղթել» իմաստով, շատ ավելի հավանական է, որ բերդանվան հիմքում էլ ընկած լինի հենց այդ բառը, որից, վերստին ուրարտերենի օրինաչափությամբ՝ կազմվել է erbitu հոգնակի III դեմքը: Սա պարզ ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող բառը պատկանում է ուրարտերենի բառապաշարին²¹:

էրեբունի > երեվան փոխանցման մեջ ինչ-որ չափով առկա է նաև իմաստային արժեքի փոփոխություն. նկատի ունենք վերջին -un/i/-ն, որը հայերենում դարձել է -ան:

Ուրարտերենի բայակազմության մեջ -u- հիմքով ներգործական բայը (անցողական) դառնում է շեզոք (անանցողական), երբ փոխարենը ստանում է -a- հիմք. այսպես, օրինակ, Տi-ú-bi «փոխադրեցի», Տi-a-bi «երևաց», nah-u-bi «բերեցի», «տարա», nah-a-di «եկա»²², «նստեցի», «բազմեցի» (գահին), ul-ú-li «ուղարկեն» ul-a-di «արշավեցի» և այլն:

Նման երևույթ նկատելի է հայերենում, ինչպես նշել է Դ. Ա. Ղափանցյանը, միայն ե>ա փոխանցումով՝ թվել//թվալ, ծխել//ծխալ, հին հայերենում՝ եբեր//բերալ, Լտես//տեսալ և այլն²³:

²⁰ И. М. Дьяконов, Г. А. Меликшвили, Наир-Урарту, Тбилиси, изд. АН Груз. ССР, 1954, ВДИ, 1956, № 2, էջ 62:

Ուրարտագետ Հ. Կարազյոզյանը այլ կարծիքի է (տե՛ս «Երեվան» անվան ստուգաբանության շուրջը» հոդվածը. «Երեկոյան երևան», ս/թ սեպտեմբերի 17-ը), որին հանգամանորեն կանդրադառնանք ուրիշ առիթով: Առայժմ ասենք այսքանը, որ ուրարտացի թագավոր Հզոր Արգիշթին իր կառուցած բերդը անվանակոչելու համար, ուրարտերենում առկա էրեբ- բայարմատը մի կողմ թողած, հազիվ թե դիմեր (ավելի ճիշտ՝ կազմեր) ուրարտա-թրակերեն խառնածին մի բառի, որը արտահայտեր XX դարի հասկացողությամբ մի իմաստ՝ «ժողովրդաշեն»: Մենք որոշ հիմքեր ունենք մերժելու Հ. Կարազյոզյանի այս և սրա հետ կապված այլ դիտողություններ:

²¹ Հակառակ դեպքում, թերևս հնարավոր լիներ այն աքթադերենից փոխառություն համարել՝ «մուտք», «մտնել» նշանակությամբ, թեև աքթադերենում վերոհիշյալ բառը գրվել է երկար .e-ով՝ erêbu: Որ նման փոխառություն չկա ուրարտերենում, պարզ երևում է Թոփուզավայի երկվեզվյան արձանագրությունից (УКН, № 264, ուր. տող 24, ասս. տող 23, ծնթ. 36), ուր աքթադերեն erêbu-ի դիմաց ուրարտերեն erbu-ni բայը չի հանդիպում:

²² И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, 1967, էջ 148, ծնթ. 72:

²³ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, 1940, էջ 27:

Կա մի հանգամանք ևս, որը նույնպես կարող էր դեր խաղալ erebuni > erewan փոխանցման համար: Ուրարտերենում տեղանուններն ու ցեղանունները ստանում են -u-ni/e, -u-ḫi/e, -a-ni/e, -a-ḫi/e վերջավորություն, որոնք, ըստ էության, գրեթե նույնարժեք են՝ Eti-u-ni//Eti-u-ḫi, Uelik-u-ni//Uelik-u-ḫi, թերևս նաև՝ Eri-a-ḫi//Eri-a-/i-ni և այլն:

Վերոհիշյալ բառակազմական մասնիկները, ամենայն հավանականությամբ, սկզբնապես իմաստային տարբեր արժեք են ներկայացրել. այդ պարզ երևում է նրանց կիրառական դեպքերի ընդհանուր պատկերից: Այսպես՝ քաղաքանունների ու երկրանունների մեջ -a-ḫi մասնիկը բացակայում է, u-ḫi-ն մոտավորապես հավասար կիրառություն ունի երկրանունների ու ցեղանունների մեջ. -a-ni-ն ցեղանուններում կրկնակի, իսկ երկրանուններում՝ քառակի անգամ ավելի է հանդիպում, քան -u-ni մասնիկը, մինչդեռ քաղաքանուններում նրանք ունեն հավասար կիրառություն, ըստ որում, նորից քառակի անգամ ավելի, քան մյուս մասնիկները:

-a-ni և -u-ni ուրարտական բառակազմական վերջավորությունները, գուցե թե հատկապես, ցեղանունների հետ կիրառվելով նախապես արտահայտել են հոգնակիության իմաստ:

Հայերենում դրանք հոգնակիակերտ մասնիկներ են. -ունի-ն հայկական տոհմանունների մեջ վաղուց ընդունված է համարել ուրարտական լեզվատաղձի տարր (Արծրունի, Արշակունի, Բագրատունի և այլն), ինչ վերաբերում է -ան/ի/-ին, այն հայերենում թեև խիստ սակավաթիվ օրինակներով է հայտնի (կանանի, աղատանի, սվազանի, կամ՝ ձիան, իշան, իծան և այլն), սակայն, հետազայում -ք հոգնակիակերտ նշանով զուգակցված, ունի լայն կիրառություն՝ հարգանք, պատկառանք, զրկանք և բազմաթիվ այլ դեպքեր²⁴:

Այսպիսով, ուրարտական -un > -ani փոխանցման համար մեր տրամադրության տակ եղած նյութերը առայժմ մատնանշում են հետևյալ հնարավորությունները.

ա) Ուրարտական բազմաթիվ այլ քաղաքանունների նմանությամբ Erebuni-ն թերևս հնագույն հայերը հնչել են Erebanı:

բ) Հայերեն հոգնակիակերտ -ունի-ն (-unı) փոխարինվել է -ան(ի) (-ani) համարժեք հոգնակիության մասնիկով. սա, ըստ էության, մոտ է նախորդ հնարավորությանը:

գ) Եվ վերջապես՝ եթե քաղաքանվան հիմքը բայաձևն է, erebu- «գրավել», «նվաճել», ապա ereba-ն պետք է արտահայտեր շեղոթության իմաստ:

Հնարավոր է նաև, որ քաղաքանունը ուրարտացիք հնչած լինեն Erebonı. այդ դեպքում o > a փոխանցումը առավել դյուրին կլիներ:

Ի վերջո նշենք, որ ուրարտերեն Erebuni-ն մենք տառադարձում ենք հայերեն այբուբենի 7-րդ հնչյունով՝ է-ով²⁵, որը մեր համոզմունքով, ավելի մոտ պետք է լինի ուրարտական արտասանությանը: Ուրարտերենում բառասկզբի e-ն (նաև՝ i-ն) կայուն է, հակառակ բառավերջի e-ի կամ՝ i-ի, որոնք այնքան անկայուն են²⁶, որ թերևս չեն էլ արտասանվել:

²⁴ Ա. Ս. Ղ ա ր ի ր յ ա ն, Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը (Նյութեր հին Հայաստանի պատմության, 1935, էջ 91—92, 97—98):

²⁵ Այսօրվա հնչմամբ:

²⁶ Ուրարտագիտական գրականության մեջ նկատված է, որ e և i հնչյունները ձայնավոր են, որոնք որոշ տատանումներ են տալիս խուրրիներեն և ուրարտերեն գրության մեջ:

Քննության առարկա քաղաքանունը հենց արարատյան (և այլ) բարբառով արտասանվում է էրեւման և ոչ թե Երեւման, որը ավելի ուշ երևույթ է՝ է հնչյունը: ըստ երևույթին, հենց հայերենի օրինաչափությամբ հետագայում յողայնացվել է ու փոխանցվել և հնչյունի Մենք ամենից ավելի հավանական ենք համարում վերջին՝ է (e) > և (ie) հնչյունափոխությունը էրեւման > Երեւման բառերի մեջ:

Այժմ տեսնենք, թե երևանյան հարթության նվաճման մասին ինչ տեղեկություններ ունենք Ուրարտուից և ո՞րն է էրեբունիի նշանակությունը:

Արին-բերդի և Կարմիր բլուրի պեղումները չեն հայտնաբերել ուղղմական բնույթի արձանագրություններ: Նման արձանագրություն մեզ հայտնի չէ նաև Արմավիրից, ուստի հիշյալ վայրերի, և մասնավորապես էրեբունի քաղաքատեղիի նվաճման մասին առայժմ ուղղակի տեղեկություններ չունենք: Արգիշթի Ա-ի տարեգրություններում ևս, թե՛ քաղաք էրեբունին, և թե՛ Արգիշթիի նիլին (հետագայի Արմավիրը), հիշատակված են միայն այդ բերդ-քաղաքների կառուցման առթիվ, այսինքն՝ մեզ հետաքրքրող վայրի շուրջը հասած գրավոր տեղեկությունները վերաբերում են Արգիշթի Ա-ի այնտեղ ձեռնարկած շինարարական գործունեությանը:

Ըստ երևույթին, ուրարտական տիրակալների ուղղմական արձանագրությունները միշտ չէ, որ պետք է փնտրել շինարարական վայրերում: Մեզ հասած նյութերից կարելի է ենթադրել, որ ուրարտացիք իրենց ուղղմական առանձին տերիտորիալ միավորումների մասին հաղորդումները հաճախ թողել են գրաված հողամասի սահմանագծերում՝ համառոտ ժայռագրությունների ձևով:

Ինչպես ասացինք, Արին-բերդում ուղղմական բնույթի արձանագրություն տվյալ վայրի մասին չի գտնված, սակայն, Երևանին մոտիկ, էլարում, որը Լրևանյան հարթության հյուսիսային վերջին սահմանակետն է կաղմել, Արգիշթի Ա-ը թողել է 10 տողից բաղկացած ժայռագրություն²⁸, ուր խոսվում է նախ՝ որ Խալդի աստվածը արշավել ու գրավել է երկիր էթիունին, ապա նույն երկրի իրական նվաճողի՝ Արգիշթի Ա-ի կողմից Ուլուանի երկրի Դարանի քաղաքի գրավման մասին: Մի այլ սահմանակետ է նշում Լճաշենի (Օրդաբլու) ժայռագրությունը, ուր Արգիշթի Ա-ը հաղորդում է Կեխունիի նվաճման փաստը²⁹: Մյուս կողմից՝ Արգիշթի Ա-ի տարեգրության II սյունակում կարդում ենք. Haldini uštabi masinie ^{GI}Šurie karuni ^{KUR}Etiumini karuni ^{URU}Qihuni³⁰ «Խալդին արշավեց, իր գինանշով նվաճեց երկիր էթիունին, նվաճեց Կեխունի քաղաքը»: Հաջորդ տողում նշված է Կեխունիի իրական նվաճողը՝ Արգիշթի Ա-ը, որը, համաձայն 33-րդ տողի, կառուցել է քաղաք էրեբունին:

(И. М. Дьяконов. Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков, 1961, էջ 370. այս ուսումնասիրության մեջ e-ն համարվում է փակ (редуцированный), հատկապես բառավերջում): «Языки древней Передней Азии», М., 1967, էջ 124, ծնթ. 18, 20: Տե՛ս նաև՝ Г. Б. Джаукян, Урартский и индоевропейские языки, 1963, էջ 12, ծնթ. 17:

²⁷ Այստեղ և առհասարակ «նվաճում» ասելով հասկանում ենք երկրում եղած տարրեր ցեղերի միավորումը Ուրարտական պետության մեջ:

²⁸ УКН, № 131: Արձանագրությունը 1961 թ. բարբարոսաբար ու անպատիժ պայթեցվեց:

²⁹ УКН, № 134:

³⁰ УКН, № 127, II, տող 25—33:

Ինչպես տեսնում ենք, մեջբերված հատվածը վերաբերում է էլարի, լճա-
շենի և Արին-բերդի վիժագրերում նշված անցուդարձին:

Արձանագրական այս տվյալների հիման վրա պետք է ենթադրել, որ հիշա-
տակված Ուլուանի երկիրը, Դարանի ու Կեխունի քաղաքները, նաև՝ ամենայն
հավանականությամբ, Հրեբունի քաղաքատեղին (գուցե և Թեյշեբախին) մտել
են էթիունի երկիր հասկացության մեջ, որի միավորման միևնույն իրողու-
թյունն են հիշատակում Արգիշթի Ա-ի տարեգրության II սյունակը և էլարի
ժայռագիր արձանագրությունը:

Ուրեմն էլարի շրջակայքը, Սևանի արևմտյան ափը և, երևի, Երևանի ողջ
հարթությունը միավորելուց ու տղամարդ, կին գերեվարելուց հետո, Արգիշթի
Ա-ը ձեռնարկում է Հրեբունի բերդ-քաղաքի կառուցման դժվարին գործը: Մեր
կարծիքով, հենց տեղի այդ ռազմագերիներն են կառուցել Հրեբունին, որի հիմ-
նադրման վավերագիրը կազմող արձանագրության 5—6 տողերից իմանում
ենք, որ բերդը կառուցվել է բիայնացոց փառքի կամ հզորացման ու թշնամի-
ներին սարսափեցնելու (") համար:

Պեղումների շնորհիվ բացվող հույակապ պարիսպներն ու մոնումենտալ
շենքերը լիովին արդարացնում են ուրարտացի տիրակալի, առաջին հայացքից
սնապարծություն թվացող հիշյալ տողերի արտահայտությունը: Փառքի ու
զորության արդյունք են, անշուշտ, նման կառուցումները, որոնց իրագործման
համար անհրաժեշտ են վիթխարի ուժերի լարում ու միջոցների կուտակում:
Այս վայրում ռազմական գործողությունները Արգիշթի Ա-ը պետք է ուղղած
լինի Սևանի լեռնային ցեղերի դեմ. այդ մի առիթով արդեն նշել ենք³¹, որը
պարզ երևում է վերը նշված արձանագրության 25—33 տողերի բովանդակու-
թյունից: Արգիշթին արշավել է էթիունի երկիրը, գրավել է Կեխունի ծովեզրյա
քաղաքը, հասել (կամ՝ տիրել) է մինչև Ալիշտու քաղաքը, տղամարդ, կին
բռնել է և ապա՝ «կառուցել Հրեբունի» քաղաքը..., կատարել «հզոր ձեռնար-
կումներ այնտեղ»³²:

Ինչպես տեսնում ենք, բոլորովին որոշակի է, որ էլարի ու լճաշենի ար-
ձանագրված ժայռաբեկորները ցույց են տալիս ռազմական միևնույն արշա-
վանքի ընթացքում ձեռք բերած երկրամասի երկու իրար հաջորդող սահմանա-
կետները:

Ինքնին հասկանալի է, որ նախքան Երևանյան հարթություն և Սևանի
ավազան մտնելը Արգիշթի Ա-ը պետք է միավորած լիներ Արմավիրը իր շըր-
ջակայքով, ուր և շուտով կառուցում է մի այլ բերդ-քաղաք, կարևորագույն մի
կենտրոն, որը կոչում է իր անունով՝ Արգիշթիխինիլի (Արգիշթականք):

Հրեբունի բերդ-քաղաքի տեղը հայտնի դարձավ Արին-բերդի արձանա-
գրության շնորհիվ, իսկ պեղումները առավել ընդգծեցին նրա կարևոր նշա-
նակությունը: Բացի այդ, Արգիշթին Խորխորյան տարեգրության մեջ նախ հի-
շատակում է Հրեբունի քաղաքի կառուցումը, ապա՝ Արգիշթիխինիլին³³:

Այս տվյալների հիման վրա Գ. Ա. Մելիքիշվիլին ենթադրել է, որ Արաքսի
ձախ ափին, Արարատյան դաշտավայրում ուրարտական կարևորագույն կենտ-

31 Մ. Ա. Ի ս ր ա յ ւ յ ա ն, Արին-բերդի SUSI տաճարը..., «Տեղեկագիր», № 9, 1957, էջ
100:

32 ՄԿԽ, № 127, II.

33 ՄԿԽ, № 127, IV, տող 70—72:

րոնը եղել է ոչ թե Արգիշթիխիլին, ինչպես ընդունված է ենթադրել, այլ՝ էրեբունին³⁴,

Այս ենթադրությունը մի փոքր վաղաժամ էր և հիմք ուներ միայն էրեբունի բերդ-քաղաքի տվյալները: Անկախ նոր նյութերից, որոշ հիմք կար մտածելու, թե հնարավոր ու բնական է, որ Արգիշթին ավելի վաղ ձեռնարկեր էրեբունիի կառուցումը՝ սոսկ ռազմական նկատառումներով: Իր նվաճումները ապահովելուց հետո միայն նա կարող էր ծավալել շինարարական գործունեություն երկրի ներսում: Ճիշտ է, որ Արգիշթիխիլին կառուցվել է էրեբունիից հետո, բայց դա դեռ չի նշանակում, թե կենտրոնը Արմավիրը: Արգիշթիխիլին, չի եղել: Նախ՝ հազիվ թե ստրատեգիական առումով էրեբունին ավելի ապահով վայր լիներ ուրարտացի նվաճողի համար, ուր միշտ կար Սևանի լեռնաբնակ ցեղերի վտանգը, քան Արգիշթիխիլին, որը իր դիրքով ավելի մոտ էր Մինուայի՝ Արաքսի աջ ափին կառուցած ռազմա-ստրատեգիական մի այլ կենտրոնի, Մինուսխիլին և, ուրեմն, ավելի ապահով: Մյուս կողմից՝ հազիվ թե որևէ երկրորդական բերդ-քաղաք Արգիշթի Ա-ը կոչեր իր անունով:

Մեր կարծիքով, հենց Արգիշթիխիլի անունը ինքնին կարևորագույն փաստ է, որը թելադրում է մեզ, ըստ արժանավույն գնահատել Ուրարտուի հզոր թագավորի անունը կրող բերդ-քաղաքը:

Արմավիրյան արձանագրությունների ուսումնասիրության ընթացքում դեռևս 1948—1949 թթ. եկել ենք այն եզրակացության, որ Արմավիրը ուրարտացոց ժամանակ եղել է խոշոր վարչա-տնտեսական, կրոնա-մշակութային ու ռազմա-քաղաքական կենտրոն, որը իր նշանակությունը պահպանել է նաև վաղ հայկական շրջանում, ընդհուպ մինչև մ. թ. ա. IV—II դարերը³⁵:

Անշուշտ, պատահական չէ, որ նույն վայրը դարձել է հայ առաջին թագավորների՝ Նովանդունիների, արքայանիստ քաղաքը: Միայն III—II դարերում ինչպես վկայում են մեր մատենագիրները, Արաքսը փոխում է իր հունը, հեռանալով Արմավիրից, վերջինը կորցնում է իր նշանակությունը և տնտեսապես, և ռազմա-ստրատեգիական առումով, Արմավիրը զրկվում է իր նախկին փառքից³⁶:

Այս կարևոր հարցերը թերևս իրենց վերջնական լուծումը ստանան Արմավիրի պեղումների շնորհիվ. բայց և այնպես, մեզ հասած նյութերը արդեն թելադրում են՝ Գ. Ա. Մելիքիշվիլու վերոհիշյալ դիտողությանը մոտենալ խիստ զգուշորեն: Այն ժխտող անառարկելի փաստեր են նաև Արմավիրի հատկապես նորագյուտ արձանագրությունները³⁷, այս երկու վայրերի (էրեբունիի և Արգիշթիխիլինի) սեպագիր վիմագրերը որոշակի խոսում են տարբեր գործերի ու դեպքերի մասին:

Որքան էլ ավերված ու պակասավոր, այնուհանդերձ Արին-բերդի արձանագրություններն ու նրանց մեջ հիշատակվող շենքերը առկա են և կարևոր կովան մեր կարծիքի համար: Արգիշթի Ա-ի որդուն՝ Սարգուրի Բ-ին հիշատա-

³⁴ Г. А. Меликишвили. Б. Б. Пиотровский, Кармир-блур, изд-во АН Арм ССР, вып. I, 1950..., вып. II, 1952... (ВДИ, № 3, 1953, էջ 112):

³⁵ Մ. Ա. Իսրայելյան, Պատմական Արմավիրը ըստ ուրարտական արձանագրությունների (ավտոնոգրատ, 1949, էջ 14):

³⁶ Մ. Խոսեանցի, Պատմություն հայոց, Բ, գ. 1թ:

³⁷ Մեզ հայտնի է երկու նոր արձանագրություն. առաջինը գտնվել է 1965 թ., պատկանում է Սարգուրի Բ-ին. երկրորդը գտնվել է 1967 թ., կրում է մեկ տող գրություն, որով հիշատակում է Արգիշթի Ա-ին (սյան կլոր խարխա):

կող արինրերդյան արձանագրութիւնները խոսում են միայն 'ալ շենքերի կառուցման մասին (ըստ երևույթին, շուրջ 3—5 'ալ), որոնք, մեր համոզմունքով, ռազմական նպատակի են ծառայել, մինչդեռ արմավիրյան շուրջ 7 արձանագրութիւն բոլորովին այլ բովանդակութիւն ունեն և ավելի կրօնա-ծիսականության բնույթի են, որոնց նմանը չի գտնված Արին-բերդում: Արմավիրյան արձանագրութիւնները համեմատաբար ընդարձակ հաղորդումներ են շինարարական բազմազան գործերի մասին, բերդ-քաղաքի, տաճարների, ջրանցքների կառուցման, ծառատունկի մասին և այլն, մինչդեռ Արին-բերդում համառոտակի մատնանշվում է ավելի ռազմական ու նրանց հետ կապված անհրաժեշտ նպատակներին ծառայող մի քանի շենքերի հիմնադրումը (E. GAL, 'ari, E, SUSI):

Արձանագրութիւնների համեմատական պատկերը, այսպիսով, պարզ վկայում է այն մասին, որ Արգիշթի Ա-ից սկսած Արգիշթիխինիին է եղել Արաքսի ձախ ափին, արարատյան դաշտում կարևորագույն վարչա-տնտեսական ու կրօնա-մշակութային խոշոր կենտրոնը և, եթե այն որևէ չափով կարող էր իր դերը զիջել էրեբունիին, ապա այդ միայն ռազմա-պաշտպանական առումով: Էրեբունին, ըստ երևույթին, երկար ժամանակ ծառայել է որպես ռազմական պատնեշ Սևանի լեռնաբնակ ցեղերի դեմ, ինչպես և ելակետ ռազմական նոր նվաճումների ծավալման համար՝ դեպի նույն Սևանի շրջակայքը: Հայտնի է, որ Սևանի ավազանը լրիվ չմիավորեց Արգիշթի Ա-ը և նրա ծրագիրը այս ուղղությամբ շարունակեցին Արգիշթիի հաջորդները՝ Սարգուրի Բ-ը և Ռուսա Ա-ը:

Ինչպես տեսանք, էրեբունին կառուցվել է մ. թ. ա. VIII դարում, հատկապես ռազմա-ստրատեգիական նպատակներով: Այդ հուժկու բերդ-քաղաքի կառուցումը հազիվ թե իրականանար կարճատև կյանքի համար³⁸ և VII դարում, այսինքն՝ ամենաշատը հարյուր տարի հետո, այլևս էրեբունի ամրոցի կարիքը չզգացվեր Երևանյան հարթութիւնում: Մեր համոզմունքով, հենց անընդմեջ պատմութեան հետեանքով է, որ «էրեբունին» հասել է հայ էթնոսին «էրեւան>երեւան» ձևով: Այդ մասին է փաստարկում նաև բոլորովին վերջերս Արին-բերդում գտնված մի արձանագրութիւն, որը հիշատակում է ուրարտական վերջին թագավորներից մեկին՝ Ռուսա՝ III-ին, էրիմնայի որդուն: Կյանքը էրեբունիում տևել է բավական երկար. այն ոչ միայն VII դարում կանգուն է եղել, այլև հարատևել է՝ հասնելով մինչև մեր օրերը ու դեռ պիտի հարատևի, քանի ապրում է հայ ժողովուրդը:

³⁸ Դրանք, ըստ երևույթին, շատագործվել են շատ ավելի ուշ ժամանակներում, քան կարելի է եկթադրել (ն. Ս ա մ ու ե լ յ ա ն, Հին Հայաստանի կուլտուրան, II, 1941, էջ 240):